600.0247.31.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2016 թվականի №247Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի №202Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը, 2-րդ կետի «ժ» և «ժդ» ենթակետերը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 1-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցի ենթակառուցվածքների զարգացման մասին» N208Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №202Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանների N2 հավելվածի՝

1) «Արարատի մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9. Լանջառ»,

2) «Գեղարքունիքի մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39-45-րդ կետերով.

«39. Ջիլ

40. Աղբերք

41. Թթուջուր

42. Հայրավանք

43. Լճաշեն

44. Վերին Շորժա

45. Աստղաձոր»,

3) «Լոռու մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 108-110-րդ կետերով.

«108. Ֆիոլետովո

109. Մեծ Պարնի

110. Լերմոնտովո»,

4) «Սյունիքի մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 96-րդ և 97-րդ կետերով.

«96. Ագարակ

97. Լեռնաձոր»,

5) «Վայոց ձորի մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ կետով.

«35. Արենի»,

6) «Տավուշի մարզ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38-րդ կետով.

«38. Սնքար»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
31 օգոստոսի 2016 թ.
ժամը 16 00